# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ Ո ԵԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 4 | կիսավերարկու | կիսավերարկու | կիսավերարկու | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Մուգ կապույտ գույնի երկշերտ անջրանցիկ 100% նեյլոն կամ նույնատիպ, տեսակարար կշիռը` 130 գ/մ2, կտորի ներսի կողմից մեմբրանե ծածկույթով, օձիքը կանգուն, հանովի ներդիրով: Օձիքը երկակի է, ներսում շղթայի տակ նախատեսված է գլխարկ: Գլխարկը ունի կարգավորիչ, կպչուն ժապավեն: Օձիքի մեջտեղում ներկարված է կախիչ: Թիկունքը բաղկացած է 3 մասից, վերևի մասում հորիզոնական` շղթայով փակվող ներկարված գրպան: Առաջամասը բաղկացած է 4 մասից, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 2-րդ մասի ձախ կողմում կարվում է 3 մմ երկարությամբ օղակ՝ տեսախցիկի համար, իսկ աջ կողմի 2-րդ մասում կարվում է տարբերանշան և 35մմ երկարությամբ օղակ՝ ռադիոկայանի խոսափողի համար: 3-րդ մասի աջ և ձախ կողմերում հորիզոնական գրպաններ՝ ներկարված ամբողջական լուսանդրադարձնող կափույրով և շղթայով փակվող, 4-րդ մասի աջ և ձախ կողմերում թեք գրպաններ՝ ներկարված ամբողջական կափույրով և շղթայով փակվող: Դիմացից ամբողջական կափույրով ներկարված պլաստմասե շղթայով և կոճգամներով: Կողային և կրծքային գրպանները՝ կայծակաճարմանդով: Կիսավերարկուն կողքերից ներքևի մասում անջատվում է շղթայով, որի վրա կան կարգավորիչներ: Թևքերի ծայրերին ներկարված են էլաստիկ ժապավեններ՝ կարգավորող կպչունակով: Թևքերի վրա 2 շերտով 20 մմ լայնությամբ կարվում է լուսանդրադարձնող ժապավեն: Գոտին կարված կիսավերարկուին, որի մեջ մշակված է էլաստիկ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ժապավեն: Կիսավերարկուն ներսից` ներդիրի ձախ կրծքամասի հատվածում ունի ուղղահայաց գրպան: Ընդարձակ կտրվածք` շարժունակությունն ապահովելու համար: Ներդիրը բայկայի կտորից, ամբողջությամբ առանձնանում է շղթայով, որի վրա կարված է աստառ: Ներդիրի թևքերը ներսից նույնպես առանձնանում են պլաստմասե շղթայով: Թիկունքի մասում լուսանդրադարձնող POLICE, իսկ աջ կրծքամասում ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ բառերը: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան, աջ թևքի ուսամասից 60 մմ ներքև Պարեկային ծառայություն թևքանշան: Ուսադիրները` հանվող: Փաթեթավորումը` պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, որի մեջ տեսականին 5 հատ` պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ` 1 հատ: Պարկերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը: Նմուշը և չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 4 | | | | | |